



Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисе. Редакция «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՂԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Առաջ ենք դնում թէ յետ.—Ներքին ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Մատենադարանի նկատողութիւն. Նա-
մակ Հոգեւոր. Ներքին Լուսին. — ԱՐՏԱՐԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Եւրոպայի զինուորական ոյժը և
ծախսերը. Տեղեկութիւններ թիւրքաց չայտա-
նից. Նամակ Պարսկաստանից. Արաբիկ Լու-
սին. — ԽԱՌՆ ԼՈՒՍԻՆ. — ՀԵՌԱՎԻՄԵՆ. — ՅԱՅՏԱ-
ՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Միջա-
ռու.

ԱՌԱՋ ՆԵՔ ԳՆՈՒՄ ԹԷ ՅԵՏ

Ներսիսեան դպրոցի տեսչի ընտրութեան
և զրա հետ միասին մեր թեմական դպ-
րոցների հոգաբարձական հաստատութեան
գոյութեան հարցը նորից յուղում է, և
այն էլ մեր յետագիւմ մամուլի ձեռքով:
Ուրիշ բան է ասել թէ դպրոցի հոգա-
բարձութիւնը այն ձևով չէր պէտք է ընտ-
րել տեսչին, ինչ ձևով որ ընտրել է այս
վերջին օրերս, այսինքն մասնաւոր կերպով
միայն տեղեկութիւններ ժողովելով տեսչա-
կան թեկնածուի մասին, առանց նշանակե-
լու տեսչի պաշտօնը յանձն առնել յանկա-
ցողների մէջ օրինաւոր մրցութիւն, — և
բոլորովին ուրիշ բան է ուրանալ նոյն իսկ
հոգաբարձութեան իրաւունքը տեսչին ըն-
տրելու:

Ուրիշ բան է ասել, թէ տեսչին պէտք է
ընտրել արժանաւոր թեկնածուների մէջ
մրցութիւն նշանակելով և ոչ թէ ընտրել
նրան մասնաւոր անձանց սրա կամ նրա
բարեխոսութեամբ, — և բոլորովին ու-
րիշ բան է պնդել թէ հոգաբարձութեան
ձայների մեծամասնութեամբ ընտրված տե-
սուչը դեռ ևս չէ կարող ընտրված հա-
մարվել, այլ միայն թեկնածու, մինչև որ
չը հաստատվի իր պաշտօնի մէջ:

Ուրիշ բան է մատնացոյց անել դպրոցի
հոգաբարձութեան գործունէութեան պակա-
սութիւնների վրա, — և բոլորովին ուրիշ
բան է պնդել թէ նոյն իսկ հոգաբարձա-
կան հաստատութիւնը, որպէս անպէտք,
անշնորհ, փնտաւար, իր կոչումը չը հաս-
կացող հաստատութիւն՝ կատարելապէս
պէտք է վերացվի:

Ահա այն տարբերութիւնը, որ կայ մեր
յայտած կարծիքների և այն մամուլի
յայտած կարծիքների մէջ, որը իրան կոչ-
ված է համարում մեր մտաւոր կեանքի
մէջ մի նոր դարադրում կազմելու...

Արդեօք կարող է մի նոր դարադրում
կազմել մամուլի այն օրգանը, որը մի ժո-
ղովրդի տանեակ տարիներով ձեռք բերած
իրաւունքները ջնջել է առաջարկում:

Մի որ և է ժողովրդական հաստատու-
թիւն, լինի դա դպրոցական, ծխական, քա-
ղաքային, կամ գաւառական ինքնավարու-
թիւն՝ կարող է խոշոր, նոյն իսկ անկերկի
սխալներ գործել, կարող է ի չար գործա-
ծել իր իրաւունքները, կարող է զեղծում
ներ գործել, կարող է պարտազանց լինել,
կարող է տհաս լինել, կարող է պարտա-
ձանաչութեան դադարի րեւ ևս ընտե-
րացած չը լինել, բայց ուրիշ բան է ցոյց
տալ այդ հաստատութեանը իր պակասու-
թիւններն ու զեղծումները, խտտութեամբ
ընտադատել նրան, յարձակվել նրա դէմ,
յանդիմանել, մեղադրել նրան, աշխատել
ուղղել նրան, — և բոլորովին ուրիշ բան է
ջնջալ նոյն իսկ ժողովրդական ընտրողա-
կան սկզբունքը, ինքնավար հաստատութեան
գոյութիւնը խորտակել միայն այն պատ-
ձառով որ անձինք, որոնք այս րօպէիս
ներկայացնում են յիշեալ սկզբունքը, որոնք
ներկայացնում են յիշեալ հաստատու-
թիւնը՝ անարժան մարդիկ են և ընդունակ
չեն կանգնել իրանց կոչման բարձրութեան
վրա:

Մարդիկ կարող են անարժան լինել, բայց
ի՞նչ իրաւունքով դուք յանդգնում էք ան-
արժան մարդկանց պատճելու համար՝ զոչել
նրանց համար նոյն իսկ սկզբունքը, ինչ-
պէս էք վստահանում փնտաւար մարդ-
կանց հեռացնելու համար՝ առաջարկել
հասարակութեանը ոչնչացնել ինքն ըստ
ինքեան օգտաւէտ, յարգելի, պատական
հաստատութիւնը:

Քաղաքային ինքնավարութիւնը ինքն
ըստ ինքեան թէ և օգտաւէտ, յարգելի, ան-
հրաժեշտ, պատական հաստատութիւն է,
բայց որովհետեւ այս րօպէիս այս ինչ քա-
ղաքի դուռնիք ձայնաւորները ընտրելի մի
անարժան քաղաքացիութիւնը համար՝ զոչել
նրան անպիտան անդամներ, անըն-
դունակ քարտուղար, — ուրեմն առաջար-
կենք ոչնչացնել նոյն իսկ քաղաքային ինք-
նավարութիւնը:

Զեմամբ (գաւառական թէ նահանգա-
կան) ինքնավարութիւնը շատ լաւ բան է,
բայց որովհետեւ այս ինչ զեմամբում մը-
տել են ծոյլ, անընդունակ, զուրկ նոյն
իսկ և կաշառակեր, հարստահարող մար-
դիկ, — ուրեմն առաջարկենք ոչնչացնել նոյն
իսկ զեմամբի հաստատութիւնը, այսինքն

նահանգական և գաւառական ինքնավա-
րութեան պատական սկզբունքը:

Ժողովրդական ընտրողական հոգաբար-
ձութեան, դպրոցական ինքնավարութեան
սկզբունքը ինքն ըստ ինքեան օգտաւէտ,
նոյն իսկ անհրաժեշտ սկզբունք է, բայց
որովհետեւ այս ինչ հոգաբարձութիւնը
սխալ է գործել՝ հեռացնելով իր պաշտո-
նից մի շատ էլ հանձարաւոր ուսուցչին և
մի ուրիշ սխալ է գործել՝ ընտրելով մի ան-
ընդունակ տեսչին, — ուրեմն եկէք ոչնչաց-
նել նոյն իսկ ընտրողական սկզբունքը,
ժողովրդական հոգաբարձութեան հաստա-
տութիւնը և դպրոցական ինքնավարու-
թիւնը...

Եւ այս տեսակ մտքեր յայտնողներ, այս
տեսակ թշուառ սօթիստներ, այս տեսակ
փնտաւար իդիօտներ՝ յանդգնում են ժո-
ղովրդի առջև հանդիսանալ որպէս նրա
մտաւոր զեկակարներ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ

Ունենալ հայերէն լեզուով Եփեսոսի և Եւրօպա-
կան այլ առաջնակարգ հեղինակների գրուածնե-
րը, — մի շատ գովելի ցանկութիւն է, և ոչ միայն
գովելի ցանկութիւն, այլ և մի անհրաժեշտ պա-
հանջ, որ պէտք է լրացվի մեր նոր գրականու-
թեան մէջ: Ահա այդ միտքը կրկին անգամ արթ-
նացաւ. մեր մէջ, երբ ձեռք առնէք վերլուծ Եփե-
սոսի շարքի շարքի նշանաւոր ողբերգութեան հա-
յերէն թարգմանութիւնը, որը այս օրերս լոյս է
տեսել, թարգմանութեամբ պ. Սինեքերիմ Արծ-
րունու:

Յանկանալով ունենալ «Համէտի» նման գը-
րուածների հայերէն թարգմանութիւնը, անկաս-
կած և ամենքի ցանկութիւնն է նոյնպէս տեսնել,
որ Եփեսոսի նման գրողի աշխատութիւնները
թարգմանվեն այնպիսի ինքնավար և հմուտ
կամար, որ այդ թարգմանութիւնների մէջ պահ-
պանվի գրուածքի ամբողջ ներութիւնը, նոյն իսկ
ամենավորը եկելները, և այն հոգեբանական և
բանաստեղծական առանձնայատկութիւնները, ո-
րոնք արտաբայվում են «Համէտի» նման գը-
րուածքի ամեն մի տողի մէջ:

Թարգմանել «Համէտի» նման գրուածքը կա-
րելի է երկու նպատակով, այն է կամ միմյանի
բնմի համար, և կամ յատկապէս գրական ու-

թեան համար: Առաջին դէպքում թարգմանիչը
զուրկ է կարող է զոհել գրուածքի այս կամ այն
առանձնայատկութիւնը, նայելով բնմի և թատ-
րօնական հասարակութեան հանգամանքներին,
սակայն երբ այդպիսի մի գրուածքի թարգմանու-
թիւնը արդէն տպագրվում է, այդ դէպքում ան-
պայման կերպով պէտք է գործի վրա նայել ա-
ւելի ծանր կերպով, և պէտք է աւելի ձեռնհաս
լինել:

Պ. Սինեքերիմ Արծրունու «Համէտի» թարգ-
մանութիւնը մեզ վրա առաջին տպաւորութիւնը
թողեց, այն է, որ նա թարգմանված է յատկա-
պէս բնմի համար, ինչպէս խոստովանում է և
ինքն թարգմանիչը, յայտնելով որ այդ թարգմա-
նութիւնը կատարված է հայոց թատրոնական
վարչութեան պահանջի համեմատ, քսան և երեք
օրվայ ընթացքում, և յանձնված է տպագրու-
թեան այնպէս, ինչպէս ելած է զրչի տակից
1880 թ. Լալկանին (այսինքն բնմի վրա ներկայա-
ցնելու համար) առանց որ և է փոփոխութեան և
ուղղելու:

Թարգմանողը, անկասկած, գրանով ուղղում է
արդարացնել «Համէտի» թարգմանութեան պա-
կասութիւնները, թէ և ինքն քաջ դիտել իր գործի
պակասութիւնները:

Սակայն մասամբ ներել կարելի է մի որ և է
թարգմանչին զուրկ է այնպիսի պակասութիւններ,
որոնք անմիջապէս հետեւում են այն հանգաման-
քի, որ թարգմանողը չը գիտէ բնագրի լեզուն, և
որ նա ստիպված է թարգմանել, օրինակ, «Համ-
էտի» ոչ թէ անգլիերէնից, այլ ֆրանսերէնից
կամ ռուսերէնից: Բայց չէ կարելի դիշող լինել
դէպի թարգմանողը այն դէպքում, երբ նրա
թարգմանութեան մէջ պատահում են այնպիսի
պակասութիւններ, որոնք հեշտութեամբ կարելի
էր վերացնել:

Մեր առաջ գրած «Համէտի» թարգմանութիւ-
նից մենք, ի հարկէ, չենք էլ սպասում, որ նա
արտայայտի Եփեսոսի գրչի իրաքանչիւր ելե-
ջը, և այն կարակական ներութիւնները, որոնք
«Համէտի» տողերի մէջ են թագմված, բայց մենք
իրաւունք ունենք սպասելու, որ այդպիսի զրքի
թարգմանութեան մէջ լինի գոնէ լեզուի պար-
զութիւն և մշակված լեզու: «Համէտի» այս
թարգմանութեան մէջ կան շատ երեւներ, որոնք
թարգմանված են հարթ լեզուով, բայց պակաս
չեն և այնպիսի օրինակներ, որոնք հեշտութեամբ
կարող են արտաբայել թարգմանութիւնը: Մենք
չենք էլ խօսում այն բանի մասին, որ գիրքը լի
է գրաբար գործաւորներով, ինչպէս, օրինակ,

Ինձ երևում էր, թէ նա շատ էլ ուշադիր չէր
հանդիսականների դատողութիւններին, կատակ-
ներին, բամբասանքներին և պարծենկոտ ինքնա-
գովութիւններին, որպէս թէ ասելիս լինէր՝ «ու-
նայնութիւն ունայնութեան»:

Խոսողների մէջ ձայնը սովորականից աւելի
բարձրացած ժամանակ, նա, մէկ մէկ իր թանձր
յօնքերը բարձրացնելով, րօպէապէս տակից
կը նայէր վիճողներին և, կրկին նախկին դիրքը
բռնելով, կը մխէր հայեացքը իր առաջ՝ գործի
հիստուածքի մէջ, կամ աւելի ճշիւ, իր ներքոյ:
Այսպիսի ժամանակ նա՝ իր լայն խորշմած
ճակատով, վշտաբեկ դէմքով՝ տեսնողի ցաւակ-
ցութիւնն էր շարժում:

Այդ փորված մարդու դէմքը անկարելի էր մո-
ռանալ: Չարաբանաց ուրբաթ երեկոյան, ժամ-
երգութիւնը սկսելուց առաջ էր խոր հառաչան-
քի ձայնը հասաւ իմ ականջներին, և ես, երեսն
յետ դարձնելով տեսալ սիւնի և պատի աղօտ
լոյսի մէջ ծնկաչափ Միքայէլ-Քոնստանտին Բաղդատա-
րած ձեռքերով, հայեացքը մի տեսակ յափշտա-
կութեամբ վերն ուղղած և արտասուքի խոշոր
կաթիլները աչքերում, տանջված մարդու և ան-
կեղծ ապաշխարողի հազազելու, արտաբայ մի
պատկերին էր ներկայացնում նա ասելով. «անձն
իմ յոյժ խռովեցաւ և դու Տէր մինչև յիջր»:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻՐԶԱ—ԹԵԻՈՍ

ՊԱՐՏԱԿԱՆԱՅԵՐԻ ԿԵՆՏԻՅՑ
(ՅԻՇ ՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ)

I

Թարգմանիչ հայերի մէջ վարձված հարուստների
շարքում մեծ էլ մերի աղքատութիւն է տրեւում:

Զեմ կարող ասել, թէ Միքայէլ-Քոնստ *) ան-
բաղդիքի երկրորդ կարգին էր պատկանում, թէ
երրորդը: Նրային գիտեմ, որ ճշտ անուանով աղքա-
տը առաջին թշուառներէն էր:

Ճշտ բնակվում է Լիւովա կոչված թաղի եկե-
ղեցու բակի շինութիւններից մէկում: Թող ըն-
թերողի զգացմունքը չը վերաօրվի, եթէ ասեմ,
որ այդ շինութիւնը սենեակ չէր ամենին, այլ
մի օրջ, որը իրան կից արտաքինից բաժանվում
էր բարակ աղիւսեայ միջպատով:

Ճշտ, կուրացած, ոտ ու ձեռքը մի քանի
մատներէնց գուրկ, դտացած, պուտա (շրթնաւ),
ապրում է աղքատութեան մէջ, չնչու է և անտա-

*) Թեոս վարձապետ: Միքայէլ կը նշանակէ և
գրագիր:

նելի գարշահատութիւն: Ունեցածն է անկողնի
տեղ ծառայող մի երկու հին ցնցոտիներ: Տըքտե-
րոց թէ և միշտ անպակաս, բայց դեռ ինքը
յոյս ունի որ մէկ օր պիտի կարողանայ գնալ
Ս. Կարապետ, քանի որ նրա ուխտաւորն է:
Կիրակի օրերը նստում է եկեղեցու բակում և ո-
ղորմութիւն ստացած բիշոփներով (քառօրը կօ-
պէի) հաց է առնել տալիս, ժամկոյի կամ աշա-
կերտների ձեռքով: Կանանց մէջ կան զմտախո-
նիք, որոնք սրան բաժին են ուղարկում, բայց
շատ անգամ էլ, միմյանից վրա յոյս զնելով,
դրում են ձեռքին այդ բաժինը:

Զեմը ժամաւորները չը կան: Ցուրտը անտա-
մալի են, ուստի և ձեռն մինչև գարունը էլ վեր-
մալի տակից չէ դուրս գալիս: Ամեն անգամ
Միքայէլ-Քոնստ, սրան տեսնելով, լսելի ձայնով
«Կառք քեզ Տէր, իմաք քեզ ողորմած Թագա-
ւոր» է ասում և գոհանում:

Միքայէլ-Քոնստ, թէ և մի յետ ընկած լիզողում,
մի հին սենեակում է բնակվում, գոնէ ունի յա-
տակը ծածկող խորի, վերմակ, բարձ, կուտ, ջրա-
ման, ժամադիրք և մի Ատուռածաշունչ:

Ուրեմն էլ ինչ խօսք, որ սա շատ բաղաւոր
էր ձեռքի: Վերջապէս սա ոտ ու ձեռքն առողջ,
միջին հասակով մի աղամարդ է: Չը նայելով որ
յիսուն տարեկն անցած, բայց տեսնողին հազիւ

յիսուն տարեկան է երևում, թէ և լայն ճակատ
և լայն երեսը ազատ չէին խորշմաներից:

Կարճ ու լիւրձը ալեխառն միջուրբով, ուսը
հասնող առատ մազերով, սուր տեսողութեամբ,
լսողութեամբ և լուրջ դէմքով՝ սա մինչև իսկ
նախանձելի էր Թարգմանիչը: Երբ քահանայներին

Ամառ, ձմեռ թէ և նոյն հագուստի մէջ, թէ և
կապոյտ դէմալի *) գոյնը թաւած, բայց գոնէ
տաք էր, մաքուր և առանց կարկատանների: Նրա
արխաւուսը և գոտին չէին կարող ասել, թէ ինչ-
պէս էին, որովհետեւ նրա գէյմալի «Հափշտաւորները»
միշտ մէր տուած էին լինում, որի տակից հա-
զիւ մի թիւ լատիկ վարթիկի ծայրերն էին ե-
րևում: Գլխի պարսկական գլխարկին և ոտի
կոշիկներին էլ այնքան հին չէր կարելի ասել:

Բայց թէ ինչու միշտ տխուր էր և վերջերս
էլ օղին սիրեց, այդ թարգմանիչներից շատերին
անհասկանալի է մնում:

Եւ շատ անգամ պատահում է Միքայէլ-Քոնստին
եկեղեցուց դուրս, նաև ուրաւ, լիւրտը հանդէս-
ներում: Նա միշտ նոյն անուանակ և վշտաբեկ կեր-
պարանքն ունէր, նոյն արհամարհանքի գոյն ու-
նեցող հայեացքը աչքերում:

*) Ուստաց կափտանի և վնդերկայի մի խառ-
նուրդ:

(Կը շարունակվի)

Հեղինակաւորները հոգաբարձութիւնը, ստանալով մօտ ժամանակներու թափառանքները խմբից յօգուտ աղբատնիկներու տուած ներկայացումները զոյացած 80 րուբլի, կարողացել է յանձնել այդ գումարը քաղաքիս զեղալուծածուն, որպէս զի սա աղբատնիկի համար բժշկի ղեկավարմամբ ստանալի ղեղերը դնից՝ իր խոտացած 300/0 զինման փոխարէն 400/0 զինման անէ Որքան նպատակաւոր մար է այդ տեսակ կարգադրութիւնը, որքան է ասել: Մենք միայն այսքան գիտենք, որ Արարիկաբար աղբատնիկի շտաբը ոչ թէ ղեղերի, այլ հացի են կարօտ:

Մի ժամանակ, — ասէ էլ ոչ շատ առաջ, — Կ. Պօլսի մեծ հին շէնքի աղբատնիկները և գործիչները պարծենալով Գալֆայեան կոչված որբանոցով, ներքոներ էին կարգում նրա հիմնադրին՝ Սրբուհի մայրապետին: Սակայն Կ. Պօլսում, ինչպէս երևում է, ամեն բան միայն փրկու խօսքերով սկսվում ու վերջանում է: Դրա ապացոյց թող լինի այն, որ այսօր այդ նոյն որբանոցի հիմնադրի մայրապետը՝ ներկական միջոցներից զուրկ՝ օգնութեան է կարօտ, և նրան մի շօշափելի օգնութիւն չէ ցոյց տրվում... Մեծախօս պոլսեցիները մի քանի կօպէկներ հանդանակելով են ուղում նպատակը (ստաւապետ մայրապետին), և մի քանի կօպէկ հանգանակելով կարծում են, թէ մի արտասովոր անձնապահութեան օրինակ են ցոյց տուել...

Ապրիլի 12-ին Կովկասեան բժշկական ընկերութիւնը տօնեց իր գոյութեան 25-ամեայ յօբելանսը: Ընկերութեան գործունէութեան վերաբերեալ տեղեկագիրը կարդալուց յետոյ, ընկերութեան ժողովում կարգադրվեցան այն բոլոր հնազանդները և ուղերձները, որոնք ստացվել էին ընկերութեան յօբելանսի առթիւով դանադան գիտնական հիմնադրութիւններից, պրոֆեսորներից և բժիշկներից:

Կ. Պօլսից մեզ գրում են հետեւեալը. «Հայոց պատմութեան դասաւարտութեան խնդիրը վերջացել է: Եկարեքսի կողմից պատրիարքարան ուղարկված հրամանը և պատրիարքի տուած պատասխանը հաղորդվել է արքունի պալատին: Սուլթանը զայրանալով, որ մի այդպիսի խնդիր է յարուցվել, հրամայել է վերջ տալ դրան: Սուլթանի բանած այդ զիջումը լաւ տպաւորութիւն է թողել, քանի որ դա մի ապացոյց է, որ հայոց պատմութեան խնդիր յարուցանելը եղել է անհնազանդ Սուլթանի գիտութեան, այլ միայն նախարարների ձեռքով:»

Լուսմ եղբ, որ վերադառնալով իր ծննդավայրէջքից երևան պէտք է գնայ այցելելու պարսից Նասր-էդդին շահին, երբ նա հասած կը լինի Երևան:

Արկին պատրիարքական հրաժարականի խնդիրը Ահա թէ ինչ են գրում այդ մասին մեզ Կ. Պօլսից: «Խորքէն պատրիարքը նկատելով, որ կուսակցութիւնները բազմացել են, մտադիր է հրաժարական տալ: Պատրիարքը իր այդ մտադրութիւնը յայտնել է Սիմոն պէյին: Սիմոն պէյ իրաւոր է տուել պատրիարքին այդ մասին խնդիր չը յարուցանել, յայտնելով որ Զատիկից յետոյ այդպիսի մի խնդիր կարող է նկատուելութեան առնվել: Սակայն աղբային ժողովի անդամներից շատերը կարծում են, որ ներկայումս խորքէն պատրիարքը յարմար անձն է, ուստի և մտադիր են յայտնել պատրիարքին, թէ իրան աջակից և զօրավոր պիտի լինեն: Բնականաբար պատրիարքն էլ զգոյշ պիտի լինի Սիմոն պէյ և Նուրեան է-ֆէնդիի նման մարդիկեանցից:»

ԲԱԳՈՒԻ մեր թղթակիցը գրում է մեզ. «Ապրիլի 11-ին Բագուի ամբողջ հասարակութիւնը ներկայ էր պ. Ներսէս Դանիէլեանի կօնցէտին: Պէտք է խոստովանած, որ ամբողջ հասարակութիւնը վերին աստիճանի զգացված և հիացած էր Ներսէսի երգչի ձայնից: Դանիէլեանի նուիրելի մի օսկէ շղթայ: Դանիէլեան կատարելապէս լի էր և մեր երգչի վարձատրվեց բուռն ծափահարութիւններով և անվերջանալի կեցցենքերով:»

ՍԱՂԻԱՆԻՑ ստացանք պ. Թարսիւն Զաքարեանի ձեռքով 5 րուբլի, որը հանգանակված է այդուրի մի քանի երկրաստորներով մէջ, հան-

գուցեալ Բագիթի զրքերի հրատարակման օգտին:

Ապրիլի 13-ին Թիֆլիս հասա Բուխարայի ղեկավարութիւնը, որը Պետերբուրգ էր գնացել, և այժմ այնտեղից վերադառնալով Թիֆլիս, պէտք է ուղեորով դէպի Բուխարա:

Հայուհեաց Բարեգործական ընկերութեան անդամները՝ համեմատաբար միւս ընկերութիւններին հետ՝ աւելի և ուսնողուն են ընկերութեան ներկայումս միջոցները մեծացնելու վերաբերմամբ: Այդպէս, օրինակ, ինչպէս լուսմ եղբ, յօգուտ ընկերութեան մօտ ժամանակներս սիրողներին մի ներկայացում պիտի տրվի և բժ. Ա. Բարսեղեան մի դասախօսութիւն պիտի կարդայ նոյնպէս յօգուտ այդ ընկերութեան:

Երէկ, ուրբաթ օր, ապրիլի 14-ին, Կարա-Մուրզայի երգչի խումբը երգեց ամբողջ պատարագը Թիֆլիսի վաճառի մալ-եկեղեցում: Հնազանդան շինութեան կամարների տակ լսվեցան վերջապէս կանոնաւոր, ներդաշնակ խորական երգի ձայները: Կարա-Մուրզայի համար հարկաւորվեց տարիներ տնտեսող աշխատանք մեք պատարագը կանոնաւորելու, բառաձայն դարձնելու և նօտաների վերածնելու, մի և նոյն ժամանակ անխախտ պահպանելով արեւելեան, բուն հայկական եկեղեցական երգչոցութեան ընտելութիւնը: Երգչոցները յիշում են, որ դրա համար պ. Կարա-Մուրզա անցեալ տարին ճանապարհորդեց դէպի Կ. Պօլսի, վիճենա, վէնեցիա և այլն, որպէս զի ուսումնասիրէ հայկական եկեղեցական երգչոցութիւնը, որը պահպանվել է Եւրոպայի թէ հայ-ուսուսողականների և թէ հայ-կաթօլիկների մէջ: Նա ուսումնասիրում էր նմանապէս, երկար ժամանակ, այն երգչոցութեան ձևերը, որոնք պահպանվել են մեր գաւառական քաղաքների և գիւղերի հայոց եկեղեցիներում: Օրինակ, «Տէր-Ողորմեան», խումբը երգում է (մինչ օրս տօնով) այնպէս, ինչպէս այդ երգանակը Հայաստանի խորքերում և պահպանվել մինչև այժմ, միայն, ի հարկէ, ներթարկած լինելով այդ երգանակը կանոնաւոր երաժշտական մշակութեան:

Ջանապետ կողմերից, մանաւանդ գաւառներից անդադար դանդաղներ են ուղարկում մեզ Թիֆլիսի դանադան գրալուծաւորների դէմ: Ինչպէս երևում է այդ գրալուծաւորներից միշտ սովորութիւն ունեն հարստահարելու իրանց հետ գործ ունեցողներին, չը խօսելով նոյն իսկ այն մասին, որ դրանց գիրք տուող տարիների ընթացքում ոչ մի կանոնաւոր հայի չէ ստանում: Եթէ նոյն իսկ գրալուծաւորներից կը ղեկավարվին դուք ան չէին և բի ղեկավար յատկութիւններով, — այն ժամանակ, ի հարկէ, հրատարակչական գործը մեր մէջ աշխուրդեամբ դարձանալ չէ կարող:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԹՈՒՄԱՅԻ ԶԻՆԻՈՐԱԿԱՆ ՈՅԺՎ ԵՒ ԾԱԽՍԵՐԸ

Շատ անգամ առիթ եղեւ ունեցել մասնաւոր անելու այն երեւոյթի վրա, որ Եւրոպայի այժմեան սպառազինված զորութիւնը շատ և շատ թանգ է նստում Եւրոպային, քաղաքներով շատ ժողովուրդներ տնտեսական զարգացման գործը:

Եւրոպայի այժմեան երկարատեւ սպառազինութիւնը աւելի թանգ է նստում տնտեսական տեսակետից, քան թէ կարող էր նստել նոյն իսկ պատերազմը, — ասեց մի յայտնի ղեկավար, — և այդ խօսքերը զուտ ճշմարտութիւն են ներկայացնում: Սակայն թող փաստերը խօսեն:

Մենք առաջ կը բերենք մի քանի թւանշաններ (ինչ աւելի պերճապատ, քան թէ թւանշանները) քաղաքով մեր ստացած լրագիրներից, որոնք պարզ գաղափար կը տան այժմեան զինաւորված Եւրոպայի մասին:

Պատերազմի համար պատրաստ զօրքի թիւը միմիայն Եւրոպական ցամաքային հինգ մեծ պետութիւնների մէջ համարւում է 21 միլիոնի: Այդ ահադին թիւը հետեւեալ կերպով է բաժանված պետութիւնների մէջ. Գերմանիա — 7,200,000, Ֆրանսիա — 4,108,665, Իտալիա — 2,626,000, Ռուսաստան — 2,600,000. Աւստրո-Ունգարիա — 1,181,600.

Խաղաղութեան ժամանակի Եւրոպական պետութիւնների զօրքի թիւը համարւում է 3,263,474-ի:

Դրանից Ռուսաստանը ունի 876,638 զինուոր, Ֆրանսիան՝ 512,472, Գերմանիան՝ 491,840, Աւստրո-Ունգարիան՝ 290,106, Իտալիան՝ 240,915, Անգլիան՝ 221,358, Թիւրքիան՝ 182,000, և ապա զայլա են միւս մանր պետութիւնները, որոնց մէջ վերջին տեղը բռնում է Սերբիան՝ որ ունի խաղաղութեան ժամանակի համար 13,213 զինուոր:

Միայն այդ կողմից Անգլիան առաջին տեղըն է բռնում. նրա նաւատորմը բաղկացած է 421 պատերազմական նաւերից, Ռուսաստանը բաղկացած է 380 նաւից, Իտալիան՝ 175, Աւստրիային՝ 110 նաւից, գերմանականը 79 նաւից:

Զինուորական ծախսը վեց մեծ պետութիւնների մէջ համարւում է իւրաքանչիւր տարի 4,055,440,616 ֆրանկի: Այդ ահադին գումարի մէջ չեն մտնում այն հարկաւոր միլիոնները, որ վերջին ամիսների ընթացքում կատարուելիւնները խնդրել են պարզամեաններից, արտաքին կարգի վերադառնալու նախնի համար:

Միայնակ քանակութեան կողմից Ռուսաստանը բռնում է առաջին տեղը, նա ծախսում է 991 միլիոն ֆրանկ, Ֆրանսիան ծախսում է 942 միլիոն, Անգլիան՝ 762 միլիոն, Գերմանիան՝ 537 միլիոն, Իտալիան՝ 415 միլիոն, և Աւստրո-Ունգարիան 407 միլիոն ֆրանկ:

Այդ վեց պետութիւնները չեն կազմում, ինչպէս ամենքին յայտնի է, ամբողջ Եւրոպան, և ուրեմն այդ թւերից երևում է, որ Եւրոպան զինուորական ծախս է անում իւրաքանչիւր տարի մինչև հինգ միլիոն միլիարդ:

Ինչ ահադին թիւ...

ՏԵՐԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐԻՍԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Կ. Պօլսի լրագիրները հաղորդում են հետեւեալը. «Գաւառական և կրօնական գործոց նախարարութիւնը պաշտօնադիր չը ուղղելով Կլիկիոյ Կաթողիկոսին, Առաքյալի առաջնորդ Մկրտիչ եպիսկոպոսին պաշտօնէ դադարեցումը յանձնարարած է: Կը յիշուի թէ Մկրտիչ եպիսկոպոս Կլիկիոյ Ս. Կաթողիկոսին կողմէ առաջնորդ նշանակեալ է. իսկ առաջնորդական Ֆերմանն ու պատճառաւորը Ն. Ամենապատուութեան խնդրանքը Պատրիարքարանէն ստացուած է:»

«Արեւել» լրագիրը գրում է հետեւեալը. «Կեդրոնական վարժարանը առաջին հանրային դպրոցն է եղած ուր մուտ գտած ըլլայ գերմաներէնի ուսուցիչ: Արեւել, անցեալ տարուց սեպտ. 1-ին ի վեր, խնամակալութիւնը վարժարանին յայտադրին մէջ ներմուծել է գերման լեզուն իբր կամուսնու, պայմանաւ որ աշակերտը տարին մէկ ուսուցիչ (ամսական 9 զրուշի) դիւրամատչելի վճարը մը ընեն սովորելու համար դային: Այսօր յիշեալ վարժարանի աշակերտներէն 12-ը յատուկ խնամով կուսումնասիրեն գերմաներէն, իրենց ուսուցիչ ունենալով Պ. Էռնէստ Լանկէ հմուտ գերմանացիին: Այս 12 ուսանողը գաւառացի են մեծաւ մասամբ:»

Ռոտտովոյից գրում են, որ դաւառական ժողովը մարտի 29-ին ժողով գումարելով միւսձայն Ռոտտովոյի առաջնորդ ընտրեց Հմայակ եպիսկոպոս Գիմադեանին: Այդ ընտրութիւնը ընդունվել է մեծ համակրութեամբ:

ՆԱՄԱԿ ՊԱՐԿԱՍՏԱՆԻՑ

Թէհրան, մարտի 30-ին

Ես այժմ Թէհրանում եմ, Պարսից թագաւորութեան մայրաքաղաքում: Պարսկաստանի ներկայ վիճակի մասին ճշգրիտ գաղափար կազմելու համար անպատճառ հարկաւոր է Թէհրանը տեսնել: Շատ ուրախ եմ, որ բաղդի բերմունքով ինձ աջակցեց այդ իմ ստացած տպաւորութիւններս, որոնք քաղած տեղեկութիւնների միայն ինձ համար համար են մասն և բաժին եմ հանելու. ուստի այսուհետ հետեւեալ եմ նկարագրելու եմ Պարսկաստանը, այն է՝ երկրի, ժողովուրդը, նրա հետազոտելու եմ նրա ներքին կեանքը, նրա քաղաքական, մտաւոր, տնտեսական վիճակը: Երբեք եմ հետաքրքրաշարժ կը լինի այդ և «Մշակ» ընթերցողները հաճոյք կը զգան: Ես յիշում եմ ինչ հետաքրքրութիւն և աղմուկ հանեցին Բագիթի «Պարսկաստանի նամակներ» մարտի չեմ ուղարկւած ասել, որ իմ յօդուած-

ներս եւ Բագիթի զրուածների պէս հետաքրքրութիւն և աղմուկ կը զգուեն և նոյն ներքին արժանաւորութիւնը կունենան. ոչ. այդ լինելու համար ես չունեմ ոչ Բագիթի տաղանդը, ոչ ես նրա զրչի սահունութիւնը և գրաւորութիւնը: Բագիթի նկարագրութիւնը թէն իրական, բայց նրա աստուած բանաստեղծական էր: Ես հանդիսանալու եմ սոսկ նկարագրող, պատմիչ, ներկայացնելու եմ իրողութիւնները, այնպէս ինչպէս կան, միայն ջանալու եմ այդ նկարագրութիւնը այն տեսակ դասաւորել, որ ընթերցողը կարող է դատել թէ որքան իրաւացի է մի քանի գիտնականների կարծիքը թէ չլոյսն Արեւելից պիտի գայ:»

Զեկուցանելով ընթերցողներին, որ պատրաստ ու կազմ լինեն ու համբերութիւն ունենան իմ նամակներս կարդալու, և այս նկատեն իբրեւ առաջադան, ես չեմ ուղղում նամակս փակել առանց մի քանի խօսք ասելու այն մեծ դէպքի մասին, որ այժմ միակ տիրապետող խնդիրն է Թէհրանում և Պարսկաստանում: Այդ դէպքը Նասրէդդին-Շահի ճանապարհորդութիւնն է դէպի Եւրոպա:

Շահնշահը պիտի մեկնի Թէհրանից այս ապրիլի 1-ին Թաւրիզի վրայով: 26-ին պիտի լինի Թաւրիզ. մինչև Զուլֆա մօտ 10,000 զօրք պիտի ընկերանան. իսկ Զուլֆայից Ն. Վեհափ. հետ Եւրոպա գնացողների թիւը 37 է: Շահը պիտի այցելէ Բագու, Աստրախան, Մոսկվա և Պետերբուրգ: Ապա փարիզի արուեստահան դէպք, յետոյ վիճենա, Բեռլին, և Պօլսի: Այս վերջին քաղաքում պիտի լինի սեպտեմբերի 2-ին: Պօլսից պիտի այցելէ Սերբիան, Բուդապէս, Բոլոգնա, Բեռլին և Գալապոլի: Բոլոգնայից պիտի գայ վաղիկապիկաց, Թիֆլիս, և Լեհկորա-նի կամ Թալիշի ճանապարհով վերադառնայ Պարսկաստան: Ամբողջ ճանապարհորդութիւնը պիտի տևէ 5 1/2 ամիս:

Հ. Առաքելեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Վիճենայից գրում են, որ պրինց Բատենբերգը մտնում է աւստրիական ծառայութեան մէջ:

—Ինչպէս երևում է Սօֆիայից եկած վերջին լուրերից, բոլղարական կառավարութիւնը մտաւոր է նոր փոխաւորութիւն անել: Այդ փոխաւորութիւնը հաւանականաբար կը լինի Վիճենայում և դրա նպատակն է կարգի բերել ֆինանսական դժուրը, որպէս զի կարելի լինի անընդհատ չը բարձրացնել ներկայումս հարկերը:

—Հուլիսից թագաւորը մտադիր է շուտով Բեռլին ուղևորվել՝ ուղեկցութեամբ մինիստր-նախարար Կրիպկին:

—Բեկդարդից գրում են, որ մանուկ թագաւոր Ալեքսանդրը պէտք է այցելէ Բեռլին և փարիզ: Դա խնամակալութեան ցանկութիւնն է:

—Փարիզից հեռագրում են, որ հասարակական կարծիքը այնտեղ օրից օր աւելի է թշնամանում գերման Բուլանտիէ դէմ, քանի որ նոր գտնված դոկումենտները հաստատապէս ցոյց են տալիս, թէ ինչպիսի դիտաւորութիւններ է ունեցել արկածախնդիր գնեւերը, մի կողմից անձնական իշխանութեան ձգտելով, իսկ միւս կողմից հանրապետութեան դէմ թակարդ լարելով:

—Կ. Պօլսի հայոց լրագրներում կարդում ենք. «Հանրօգուտ շինութեան նախարարութիւնը համարում է թէ մօտ օրէն երկրաշարժաց խումբ մը պիտի երթայ այդտեղ Լոնտոնէն՝ Եւրոպայի երկրաշարժային վերջնական յատկանքը պատրաստելու համար, յանձնարարելով որ պէտք եղած դեպքերում տան այդ պարոններուն իրենց աշխատութեան կատարման համար: Յիշեալ զմին արտօնատեղ Պ. Նավոն հայտնում է անդրկական ընկերութիւն մը կազմել անոր շինութեան ու շահագործման համար: Պ. Նավոն մայրաքաղաքը կը սպասուի ի մօտոյ:»

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Գիտէք ընթերցող ինչպէս է կատարվում քաղաքացիական պատերազմները Ամերիկայում:

Գուրգուրում էր այդ կնոջ հետ պատկերել, հարցնում է հաշտարար դատաւորը.
— Այո.
— Իսկ դուք ուզում էք այս մարդու կինը դառնալ.
— Այո.
— Գուրգուրում էք. վճարեցե՞ք 2 դոլար, և կարող էք դնալ:
**

Գուրգուրում էր կրկնում, վրա ոչ ոք չէր ստանում այնքան նամակներ և հեռագրեր, որքան իշխան Բիսմարկը: Պաշտոնական աղբյուրները իրենց յայտնում էին որ իշխան Բիսմարկը տարեկան ստանում է 650,000 նամակ և 10,000 հեռագրեր:

Հեղափոխության համարում հիմնվել է մի նոր ամբիոն, այն է ռուսաց պատմության ամբիոն, որը յանձնված է Կլեյնմիդ պրոֆեսորին: Այդ ամբիոնը կը կարգայ առաջիկայ սեմինարում Բոսանովների տոհմի պատմությունը մինչև Ալեքսանդր II կայսրի մահը, նախապես ընդհանուր ռուսաց պատմության կարճագույն տեսությունը արած լինելով:
**

Փարիզում կառուցված է Եվրոպայի աշտարակի վրա բարձրանալու համար որոշված է հետևել առկա աշտարակի գագաթին վրա բարձրանալու համար պէտք է վճարել 5 ֆրանկ, երկրորդ պլանտֆորմի վրա բարձրանալու համար պէտք է վճարել 3 ֆրանկ, առաջին պլանտֆորմի վրա 2 ֆրանկ: Աշտարակի վրա կարող են տեղադրվել 10 հազար մարդ:
**

Ռուս լրագրողները հազորդում են որ Կազանի նահանգի Տուրա գիւղում անցնել փետրվար ամսի 15-ին մի գիւղացի կին, Վարվարա Մամակովա անունով, մի անգամից 5 երեխայ է բերել, որոնցից երկուսը շուտով մեռել են, իսկ երեքը մինչև այժմ կենդանի են և առողջ: Մայրն էլ մի միջահասակ կին, կատարելապես առողջ է:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱՍՏԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 ապրիլի: «Новое Время» լրագիրը լսել է, որ չուտով կը սկսվեն նոր կազմակերպված տարիֆային մասնագործի նիստերը հայաստանիների վերաբերյալ տարիֆները վերաբերյալ համար, որոնք մշակված են անցնալ:

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱՐՈՒՍԻ մէջ և փոխադարձ
Հինգշաբթի, ապրիլի 27-ին, ՄԻՆԳՐԵԼԻԱ (MINGRELIE) շոգենավը, նախապես ԺԻԲՈԻՆ (GIBOIN) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսուն, Կ. Պոլիս և Մարսել: Տեղեկութիւնները մասին պէտք է զիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում Լէմուշուրի տան, Նաբերէժնայա, և Թիֆլիսում Նախկին Արժրուհի գալիերու, № 103.
1—2 (2.)

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՈՆ

Ա. ՏԵՐ-ՅԱԿՈՎԼԵԱՆԻ

Յունարի երեքից սկսած ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ԱՇԱԿԵՏՆԵՐ ՊԱՏՄԱՍԵԼՈՒ գիմնազիայի, բնական և ռուսական ուսումնարանի, կադէտների և օրպանների նախնական դասը: Այս տարվայ ուսման վարձն է 40 ռուբլի: Պանսիոնում չափաւոր գումով պահվում են զիւերթիկները: Հասցէն. Թիֆլիս, Բոլշայ-Յանկայա, 3-րդ հասցէ.
3—3

ՊՐՈՎԻԶՈՐ Ա. ՇՏԵԻՆԻՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ԱՏԱՄՆԵՐԻ ՑԱԽԻ ԵՒ ՓԶԱՆԱԼՈՒ ԴԵՄ

ՊՈԴՈԼԵԱՆ ԱՏԱՄՆԱԴԵՂ ԿԱԹՈԼԻՆԵՐ 50 ԿՈՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՈԿԱՑՆԵԱՆ ԱՏԱՄՆԱՑԻՆ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՈՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՑԻՆ ՓՈՇԻ 30 ԿՈՊ.

ԳԼԻՍԻՈՐ ՊԱՀԵՍ.

ԹԻՖԼԻՍԻՄ՝ Կովկասեան զեղա-վաճառատան, և պ. պ. Շահ-պարսկանցի, Մակկերի, Սէնչի-կովսկու և Ագմուրովի զեղա-տաներում: ԲԱԳՈՒԻ մէջ, Բէկկերի մօտ, ԳՈՐԾԱՅԻՍՈՒՄ՝ Կոփաշի մօտ, ԱՏԱՎՐՈՊՈԼՈՒՄ, Բրոննոցկու մօտ և ԵԿԱԵՐԻՆՕՒԱՐՈՒՄ:

3 ՄԱՍԿԻՆԻ ԿԱՊԻ: ԿՈՎ. 50 Կ. ՄԱՍԿԻՆԻ ԿԱՊԻ: ԿՈՎ. 30 Կ. ՄԱՍԿԻՆԻ ԿԱՊԻ: ԿՈՎ. 80 Կ.

ԱՄԻՏԵՐԻ

10—52 (2.)

ԱՅՍՈՐ, ՇԱՐԱԹ ՕՐ, 15-ԻՆ ԱՊՐԻԼԻ

Թիֆլիսի Ժողովարանի դահլիճում կը արվի պ. ԿԱՐԱՄՈՒՐԶԱՅԻ երկրորդ

Կ Օ Ն Ց Ե Ր Տ Ը

մասնակցութեամբ պ. Մ. Վարդիկեանի: Կօնցերաից յետոյ խմբի դէպի Բազու անմիջապէս ուղղւորվելու պատճառով, Կօնցերաի սկիզբը նշանակված է Ճիշդ 7 Ժամին, Տոմարինե-րը կարելի է ձարել պ. Ծատուրեանի մագաղանում և Ժողովարանի դահլիճին մօտ:
1—1

ԼՈՅՍ ՏԵՍՏԻ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Հ Ա Մ Լ Է Տ

Ողբերգութիւն 5 արարուածով, հեղինակութիւն Վիլհամ Շէքսպիրի

Թարգմանութիւն Սեմեյովի Արթուրի:

Գինն է ճանապարհածախսով 1 ռուբլի: Օտարաբաղադրացիք զիմում են Թիֆլիս. Բասիլիո Կամալյե. 3—4
Հրատարակիչ Բարսեղ Քամալյան

РОСКОШНОЕ ИЗДАНИЕ.

Большая хромо-фото-литографическая точная копия съ знаменитой картины художника А. А. Иванова

„ЯВЛЕНИЕ ХРИСТА НАРОДУ“

Съ подлинника, хранящагося въ Московскомъ Публичномъ Румянцевскомъ Музеумѣ. — Огромныхъ размѣровъ хромо-фото-литографія художественно исполненная. — Пояснительный историко-биографическій текстъ составленъ И. О. Токмаковымъ.

Картина «Явление Христа Народу», писанная художникомъ А. А. Ивановымъ въ теченіе тридцати лѣтъ, — сдѣлала цѣлую эпоху въ русской живописи; знаменитые художники какъ-то: Крамской, А. Праховъ и многіе друг. нашли, что означенная картина болѣе проникнута истинно-религиознымъ духомъ и вѣрнѣе, въ историческомъ отношеніи, библейскому характеру событія, чѣмъ всѣ доселѣ извѣстныя заграничныя картины и иллюстраціи подобнаго рода, не исключая и Доре.

Н. В. Гоголь въ своемъ знаменитомъ этюдѣ о картинѣ: «Явление Христа Народу» раскрылъ намъ величіе истинно-русскаго и православнаго творчества Иванова и указалъ на него, какъ на главу русской живописи; это же подтверждаетъ и А. Праховъ въ статьѣ своей: Матеріалы для біографіи А. А. Иванова (жур. «Пчела» за 1875 г. № 23 и № 24). Равно какъ о помянутой картинѣ были вполнѣ сочувственные отзыы въ журналахъ «Воскресный досугъ» 1867 г. № 231 и «Иллюстрированная недѣля» 1874 г. Нельзя такъ же не указать и на отзыы Архимандрита Феодора о картинѣ Иванова СІВ. 1859 г.

Цѣна хромофото-литографической картинѣ: Лакированная на бумагѣ — 1 р. 50 коп., на холстѣ 2 р. 50 коп. За пересылку и упаковку на скалкѣ 50 коп. Подписавшимся на 10 и болѣе экз. — 20% уступки.

Адресъ: Москва, Мясницкая, магазинъ церковныхъ утварей Сытовы сыновья, соб. домъ.

2—5

Недавно пріѣхалъ въ Тифлисъ

ДАНТИСТЪ ВАЛЛАКЪ

Врачъ зубной хирургіи Бальтиморскаго факультета въ АМЕРИКѢ, практиковавшій въ ПАРИЖѢ и имѣющій дипломъ Дантиста изъ ДЕРПТСКАГО университета.

Принимаетъ больныхъ по зубнымъ болѣзнямъ ежедневно отъ 9 часовъ утра до 5 часовъ вечера у себя на квартирѣ, въ СОЛОЛАХАХЪ, домъ протоіерея ОРБЕЛИ, № 16.

2—3

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԻՈՐ ՀԻՄՆԱԿԱՆՈՑ

(Կովկաս, Վորոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր

ԱՌԱՌՕՏՆԵՐԸ

ՆԱԽԱԱՐԳԻՆ—10—11 Ժ. վիրաբուժական, (և առանցազան), Թիֆլիսի և աչքի ց. բացի կիրառի:

ՐՈՒԿՈՎՎԱԿԻ—10—11 Ժ. ներքին, երկխայոց և կանանց ց.

ԿԻՐՈՒԹՅԱԿԱՆ ՄԱՍԱԿԵՆՑ—11 1/2—12 Ժ. կանանց և երկխայոց ց.

ԲԵՆԿԻԿՎԱԿԻ—11—12 Ժ. ականջի, կոկորդի, թոքի ց. և Թիֆլիսի:

ԱՐՏԵՄԻԿԱ—12—1 Ժ. երեքշաբթի, ուրաթի և կիրառի, կանանց ց.

ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12—1 Ժ. ներքին և երկխայոց ց. բացի կիրառի:

ԵՐԵՎԱՆԵՐԸ


ԳԱԳՈՍՄԱԿԻ—5—6 1/2 Ժ. կաշուի ցաւերի և Թիֆլիսի:

ՓՈՒՂԻՆԵԱՆ—5 1/2—6 1/2 Ժ. ներքին, երկխայոց և ջղային ց. (էկզարտերապիա):

ԲԵՆԿԻԿՎԱԿԻ—6 1/2—7 1/2 Ժ. Ժամ.

Հիւանդանոցումն է մահկաբարձուհի ՄՕԳԵՐ և ԵՐԿԱՆԵԱՆ:

Վճար—50 Կ.: Համախորհրդի (կոնսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ:
Հիւանդանոցի վերատեսուչ ՆԱԽԱԱՐԳԻՆ



Въ редакціи газеты „МШАКЪ“ продаются слѣдующія брошюры: 1) „Экономич. Положеніе Турецкихъ Армянъ“, публич. лекція Д—ра Г. Арпруни, перев. съ арм. А. Аракелянца. Цѣна 25 к. 2) Die Oekonomische Lage der Armenier in der Türkei, ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von A. Amiranjan. Preis 25 k. 3) Die Hungersnoth in Türkisch-Armenien, ein Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von Amiranjan. Preis 20 kop.

Иногородные, желающіе получить брошюры, благоволятъ присылать по 30 коп. почтовыми марками, за каждую брошюру.

Адресъ. Тифлисъ, Редакція „Мшакъ“, или Tiflis, Redaction „Mschak“. (6)